ՍԱՂՄՈՍ 26

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Ազնվության համար բողոք և պաշտպանության աղոթք <u>MT նախաբան</u> Դավթի Սաղմոս	Աստվածային ապահովության և փրկության համար աղոթք	Անձնական թշնամիներից ազատվելու աղոթք (Ողբ)	Բարի անձի աղոթք	Անաղարտ մարդու աղոթք
26:1-7	26:1-5	26:1-3	26:1-3	26:1
				26:2
				26:3
		26:4-5	26:4-5	26:4-5
	26:6-8	26:6-7	26:6-7	26:6-8
26:8-12		26:8-10	26:8-10	
	26:9-10			26:9-10
	26:11-12	26:11-12	26:11	26:11-12
			26:12	

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության <u>ուղեցույց</u> մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսը, ինչպես Իմաստասիրական Գրականության մեծ մասը, հիմնված է ՀԿ-յան այն հասկացության վրա, որը հայտնի է որպես «երկու ճանապարհ» (տես՝ 2 Օր. 30:15,19, Սաղմոս 1): Այն մարդիկ, ովքեր հնազանդվում են ՅԱՀՎԵԻ խոսքին, նրանց համար բարգավաճում

կա, և նրանց, ովքեր չեն հնազանդվում Նրա խոսքին՝ դատապարտություն (այսինքն՝ Ղևտացիների 26 և 2 Օրինաց 27-29 գլուծների անեծքներն ու օրհնությունները):

Բ. Սաղմոսերգուն ըստ երևույթին մեղադրվում էր ուխտի որոշակի խախտումների մեջ: ՀԿ-ում հանդերձյալ կյանքը անորոշ (տես՝ Հոբ 14:7-12, 13-14, 19:25-27, Սաղմ. 16:10, 49:15, 73:24, Ես. 25:8, 26:19, Դան. 12:1-4) գաղափար էր, սակայն զարգացող հայտնությունը (այսինքն՝ ՆԿ-ը) հստակեցնում է հարցը (տես՝ Մատթ. 25:46, Հովհ. 5:29, Գործք 24:15, 1 Կորնթացիների 15):

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ</u>

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 26:1-7
[1]Դատի՛ր ինձ, ո՛վ ՏԵՐ, քանի որ իմ անարատությամբ եմ քայլել
Ու ՏԻՐՈՋՆ եմ հուսացել, *ուստի* չեմ գայթելու:
[2]Քննի՛ր ինձ, ո՛վ ՏԵՐ, ու փորձի՛ր,
Քննի՛ր իմ երիկամունքն ու սիրտը:
[3]Քանի որ Քո գթասիրությունն իմ աչքերի առաջ է,
Ու Քո ճշմարտության մեջ եմ քայլել:
[4]Սին մարդկանց հետ չեմ նստել,
Ո՛չ էլ կեղծավորների հետ քայլել:
[5]Ատել եմ չարագործների հավաքը
Ու ամբարիշտների հետ չեմ նստի:
[6]Անմեղությամբ եմ լվանալու ձեռքերս.
Այդպես զոհասեղանիդ շուրջը կկանգնեմ, ո՛վ ՏԵՐ:
[7]Որպեսզի շնորհակալությանս ձայնը հնչեցնեմ
Ու Քո բոլոր հրաշալի գործերի մասին պատմեմ:

26:1-7 Այս պարբերությունը հատարարում է սաղմոսերգուի ցանկությունը ՅԱՀՎԵԻ կողմից դատվելու: Նրան մեղադրում էին ինչ-որ չարության մեջ՝ հավանաբար կռապաշտության:

1. դատիր – BDB 1047, KB 1022, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 7:8, 17:2-3, 35:24, 43:1, ՅԱՀՎԵՆ քննում է Իր ժողովրդին, տես՝ Երեմ. 11:20, 12:3, 20:12, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՔՆՆՈՒՄ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ</u> Սաղմ. 11:4բ:
2. քննի՛ր ինձ – BDB 103, KB 119, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 139:23
3. քննի՛ր իմ միտքը /երիկամունքները/ – BDB 650, KB 707, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 7:9, միտքը (բառացի՝ «երիկամները») և սիրտը ամբողջ մարդու էության համար դարձվածք է (այսինքն՝ մտածմունքները, շարժառիթները, գործողությունները):

Այնուհետև հեղինակը թվարկում է պատճառներ, թե ինչու պետք է դատվի.

1. ես քայլել եմ իմ անարատությամբ – BDB 229, KB 246, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 26:3բ և 26:11ա, Հոբ 4:6, Սաղմ. 7:8, 25:21, 41:12, 78:72, 101:2, Առակ. 2:7, 19:1, 20:7, 28:6
2. ես հուսացել եմ ՅԱՀՎԵԻՆ առանց գայթելու. ուշադրություն դարձրե՛ք երկու ԲԱՅԵՐԻՆ:
   ա. հուսացել – BDB 105, KB 120, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 13:5, 52:8, սա կայուն վիճակ է
   բ. առանց գայթելու – BDB 588, KB 609, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, որը շարունակական անհրաժեշտություն է (տես՝ Եբր. 10:23), նմանատիպ տեսարանի հանդիպում ենք Սաղմ. 5:8 և 18:36-ում:
3. Քո ճշմարտության մեջ եմ քայլել – BDB 229, KB 246, *Hithpael* ՎԱՂԱԿԱՏԱՐ *Վավ*-ով. այստեղ ճշմարտությունը նշանակում է հավատարմություն, ոչ թե դավանանք

4. սին մարդկանց հետ չեմ նստել – BDB 442, KB 444, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 1:1 (սա կարող է վերաբերել կռապաշտությանը, տես՝ NIDOTTE, հատոր՝ 4, էջ՝ 54)
5. ոչ էլ կեղծավորների հետ քայլել – BDB 97, KB 112, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
6. ատել եմ չարագործների հավաքը – BDB 971, KB 1338, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 31:6, 139:21
7. ամբարիշտների հետ չեմ նստի – BDB 442, KB 444, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
8. անմեղությամբ եմ լվանալու ձեռքերս – BDB 934, KB 1220, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 73:13, Թվոց 8 և 9 ծիսական գործողություններ են, որոնք կատարվում էին ազգային պաշտամունքի միջոցառումների ժամանակ (տես՝ 2 Օր. 21:6)
9. այդպես զոհասեղանիդ շուրջը կկանգնեմ – BDB 685, KB 738, *Poel* ԸՂՁԱԿԱՆ, սա վերաբերում է ինչ-որ տեսակի ծիսական պարի կամ շքերթի, տես՝ Հեսու 6:3-15, Սաղմ. 43:3-4, 48:12
10. Քո բոլոր հրաշալի գործերի մասին կպատմեմ (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՐԱՇԱԼԻ ԲԱՆԵՐ</u>)
    ա. բարձրաձայն երգել – BDB 1033, KB 1570, *Hiphil* ԱՆՈՐՈՇ ԿԱՋՄՈՒԹՅՈՒՆ
    բ. հռչակել – BDB 707, KB 765, *Piel* ԱՆՈՐՈՇ ԿԱՋՄՈՒԹՅՈՒՆ, տես՝ Սաղմ. 9:1, 40:5, 75:1

Նկատե՛ք ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐԻ և ԱՆԿԱՏԱՐՆԵՐԻ միջև տարբերությունները: Հիշե՛ք, ժամանակը եբրայերեն ԲԱՅԵՐԻ մաս չի կազմում, այլ պարզապես ավարտուն՝ կատարյալ կամ շարունակվող գործողություն է ցույց տալիս:

❖ Նկատե՛ք, թե ինչպես են նկարագրվում հավատարիմ հետևորդների հակառակորդները՝
1. սին մարդիկ (այսինքն՝ կռապաշտ, անարժեք, BDB 996, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԱՏԱՐԿ, ՁՈՒՐ, ԿԵՂԾ, ՓՈՒՉ</u>)
2. ձևացնողներ (այսինքն՝ կեղծավորներ, BDB 761, KB 824, *Niphal* ԴԵՐԲԱՅ)
3. չարագործների հավաք (BDB 949, KB 1269, *Hiphil* ԴԵՐԲԱՅ)
4. ամբարիշտ (BDB 957)
   Նաև Սաղմոսերգուի բոլոր դրական գործողությունները կարելի է հասկանալ որպես իր հակառակորդների կողմից չկատարած գործողությունները: Նա անաղարտ է և խնդրում է դատաստան: Նրանք հանցավոր են և արժանի դատապարտության:
   Իր հակառակորդներին նկարագրող տերմինների ցուցակը (տես՝ Սաղմ. 1:5, 5:10, 15:2-5) ավելի ծավալուն ներկայացվում է հաջորդ պարբերության մեջ:
5. մեղավորներ (BDB 308)
6. արյունահեղ մարդիկ (BDB 60 ԿԱՋՄՈՒԹՅՈՒՆ BDB 196, տես՝ Սաղմ. 5:6, 55:23, 139:19)
7. անօրեններ (BDB 273, տես՝ Սաղմ. 37:7), AB առաջարկում է, որ սա վերաբերում է կուռքերին (էջ՝ 163)
8. կաշառում է (BDB 1005), տես՝ Ելից 23:8, 2 Օր. 16:19, Սաղմ. 15:5

Հարց է առաջնում, թե ովքեր են այս մարդիկ: Արդյո՞ք նրանք ուխտի ժողովրդի մեջ են, որոնք ապրում էին անհավատ կյանքով, թե ուխտի մեջ չգտնվող մարդիկ, որոնք չունեին լույսը: Աստված օգնի մեզ. նրանք կարծես թե մարդիկ էին, որոնք ունեին լույսը, ճշմարտությունը և հայտնությունը, սակայն նախընտրեցին մերժել այն:

26:3 «գթասիրություն» Տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (*HESED*)</u>

26:5 «չարագործների հավաք» «Հավաք» բառը (*qahal*, BDB 874) ՀԿ-յան հիմքն է ՆԿ-յան եկեղեցու՝ *ekklesia* (բառացի՝ «կանչվածները», այսինքն՝ եկեղեցի) նշանակության, որը կիրառվում է LXX-ում, թարգմանվելով *qahal:*

Գաղափարն այն է, որ գոյություն ունեն հավաքների երկու տեսակ (տես՝ Մատթ. 7:13-14)
1. Աստծո հավատարիմ մարդիկ – Սաղմ. 22:22,25, 35:18, 40:9, 10, 89:5, 107:32, 149:1
2. չարագործներ (այսինքն՝ կռապաշտներ, տես՝ Սաղմ. 31:6)

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 26:8-12

8Ո՛վ ՏԵՐ, սիրեցի Քո Տան բնակությունը
Եվ այն տեղը, որտեղ Քո փառքի վրանն է:
9Մի՛ կորցրու իմ անձը մեղավորների հետ
Ու իմ կյանքը արյունահեղ մարդկանց հետ,
10Որոնց ձեռքում անօրենություն կա
Ու նրանց աջ ձեռքը կաշառքով է լեցուն:
11Իսկ ես, ես իմ անարատությամբ եմ շարժվելու.
Ազատիր ինձ ու ողորմա՛ծ եղիր իմ նկատմամբ:
12Իմ ոտքը հարթ տեղում է կանգնած.
Հավաքներում ես ՏԻՐՈՋՆ եմ օրհնելու:

26:8-12 Այս պարբերությունը զուգահեռվում է Սաղմ. 26:1-7-ի մտքերի հետ: Սաղմոսերգուն դարձյալ թվարկում է իր հատկանիշները ընդունված լինելու, և իր հակառակորդների գործողությունների՝ շարժառիթների մերժվելու համար:

Սաղմոսերգուի հատկանիշներն են՝

1. ես սիրում եմ տաճարը – BDB 12, KB 17, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ
2. ես շարժվում եմ անարատությամբ – BDB 1070, տես՝ Սաղմ. 26:1
3. իմ ոտքը հարթ տեղում է կանգնած (տես՝ Սաղմ. 5:8, 27:11): Սա բաց արահետի, ՅԱՀՎԵԻ ուխտի բարձր ճանապարհի պատկերավոր տեսարանն է, տես՝ Սաղմ. 119:105:

Սաղմոսերգուն խնդրում է Աստծուն իր հանդեպ վարվել տարբեր կերպով, քան ամբարիշտների հանդեպ:

1. մի՛ կորցրու իմ անձը մեղավորների հետ (այսինքն՝ «հավաքի», BDB 62, KB 74, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով: Այս ԲԱՅԸ բառացիորեն կիրառվում է «հունձքի» համար (տես՝ Ես. 62:9): Այն սկսել է օգտագործվել մահվան համար (տես՝ Դատ. 2:10, 4 Թագ. 22:20, 2 Մնաց. 34:28):
2. Մի՛ վերցրու իմ կյանքը արյունահեղ մարդկանց հետ

Այս մարդիկ բնութագրվում են արյունահեղ, չարություն հնարող և կաշառք տվող: Հստակ ակնհայտ ապրելակերպի տարբերություն է ներկայացվում հավատարիմ հետևորդի և անհավատ իսրայելացու միջև, որոնք կատարում են պաշտամունքի ծիսական գործերը, սակայն չկա ապրելակերպի մեջ արդյունք (տես՝ Մատթ. 7:15-27):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏԱԴՐԺՈՒԹՅՈՒՆ (*APHISTĒMI*)
SPECIAL TOPIC: APOSTASY (*APHISTĒMI*)

Հունարեն այս տերմինը *aphistēmi* ունի մեծ իմաստային հարթակ: Սակայն անգլերեն տերմինը “apostasy” բխում է հենց այս տերմինից և տրամադրում է իր կիրառությունը ժամանակակից ընթերցողներին: Ինչպես միշտ համատեքստն է կարևոր տեղում, և ոչ թե սահմանումը:

Սա բաղադրյալ տերմին է *apo* նախդիրով, որը նշանակում է «-ից» կամ «հեռու –ից» և *histēmi* «նստել», «կանգնել» կամ «ամրապնդել»: Ուշադրություն դարձրեք հետևյալ (ոչ աստվածաբանական) կիրառություններին՝

1. ֆիզիկապես հեռացնել
   ա. Տաճարից, Ղուկ.2:37
   բ. տնից, Մարկ.13:34
   գ. մարդուց, Մարկ.12:12, 14:50, Գործք 5:38
   դ. ամեն ինչից, Մատթ.19:27,29
2. քաղաքական առումով հեռացնել, Գործք 5:37
3. հարաբերականորեն հեռացնել, Գործք 5:38, 15:38, 19:9, 22:29
4. իրավաբանորեն հեռացնել (ամուսնալուծվել), 2 Օրինաց 24:1,3 (LXX) և ՆԿ՝ Մատթ.5:31, 19:7, Մարկ.10:4, 1 Կորնթ.7:11

5. պարտքը հեռացնել, Մատթ.18:24
6. հեռանալով անհոգություն ցուցաբերել, Մատթ.4:20, 22:27, Հովհ.4:28, 16:32
7. չհեռանալով հոգատարություն ցուցաբերել, Հովհ.8:29, 14:18
8. թույլ տալ կամ թույլատրել, Մատթ.13:30, 19:14, Մարկ.14:6, Ղուկ.13:8

Աստվածաբանական նշանակությամբ ԲԱՑԸ ունի լայն կիրառություն՝

1. չեղարկել, ներել, մեղքի հանցավորությանը թողություն տալ, Ելից 32:32 (LXX), Թվոց 14:19, Հոբ 42:10 և ՆԿ՝ Մատթ.6:12,14-15, Մարկ.11:25-26
2. մեղքից խուսափել, 2 Տիմ.2:19
3. անտեսել՝ հեռու գնալով
   ա. Օրենքից, Մատթ.23:23, Գործք 21:21
   բ. հավատքից, Եզեկ.20:8 (LXX), Ղուկ.8:13, 2 Թեսաղ.2:3, 1 Տիմ.4:1, Եբր.2:13

Մեր օրերի հավատացյալները հարցնում են շատ աստվածաբանական հարցեր, որոնք ՆԿ-յան հեղինակաների մտքով անգամ չէր անցնում: Սրա հետևանքներից մեկն այն է, որ մեր օրերում մարդիկ ավելի հակված են հավատքը բաժանել հավատարմությունից:

Աստվածաշնչում կան մարդիկ, որոնք Աստծո ժողովրդի միջից լինելով, նրանց պատճառով ինչ-որ դեպքեր են պատահել:

I. Հին Կտակարան
   Ա. Նրանք, որոնք լսեցին տասներկու (տաս) լրտեսների բերած լուրին. Թվոց 14 (տես՝ Եբր.3:16-19)
   Բ. Կորխը, Թվոց 16
   Գ. Հեղիի որդիները, 1 Թագավորաց 2,4
   Դ. Սավուղը, 1 Թագավորաց 11-31
   Ե. Սուտ մարգարեները (օրինակներ)
      1. 2 Օր.13:1-5, 18:19-22 (սուտ մարգարեին ճանաչելու կերպերը)
      2. Երեմիա 28
      3. Եզեկիել 13:1-7
   Զ. Սուտ մարգարեուհիները
      1. Եզեկիել 13:17
      2. Նեեմիա 6:14
   Է. Իսրայելի չար առաջնորդները (օրինակներ)
      1. Երեմիա 5:30-31, 8:1-2, 23:1-4
      2. Եզեկիել 22:23-31
      3. Միքիա 3:5-12
II. Նոր Կտակարան
   Ա. Այս հունարեն տերմինը բառացի նշանակում է *apostasize:* Թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարանները հաստատում են Երկրորդ Գալուստից առաջ չարի և կեղծ ուսմունքների ուժգնացումը (տես՝ Մատթ.24:24, Մարկ.13:22, Գործք 20:29,30, 2 Թեսաղ.2:9-12, 2 Տիմ.4:4): Այս հունարեն բառը հնարավոր է արտացոլում է Հիսուսի Սերմնացանի Առակի խոսքերը, որ գտնվում է Մատթեոս 13, Մարկոս 4 և Ղուկաս 8-ում: Այս կեղծ վարդապետները ակնհայտ է, որ Քրիստոնյաներ չէին, սակայն նրանք ներսի մարդկանցից էին (տես՝ Գործք 20:29-30, 1 Հովհ.2:19), համենայն դեպս նրանք ի զորու են հրապուրելու՝ գայթակղելու հասունություն չունեցող հավատացյալներին (տես՝ Եբր.3:12):

   Աստվածաբանական հարցը սրանում է, թե արդյո՞ք այս կեղծ վարդապետները երբևէ եղել են հավատացյալներ: Դժվար է պատասխանել այս հարցին, քանի որ տեղական եկեղեցիներում կային կեղծ վարդապետներ (տես՝ 1 Հովհ.2:18-19): Հաճախ մեր աստվածաբանական և հարանվանական սովորույթներն են պատասխանում այս հարցին առանց նույնիսկ դիմելու Աստվածաշնչյան որևէ հստակ տեքստի (բացառությամբ տեքստով ապացուցելի մեթոդով ամատեքստից դուրս որևէ համար

մեջբերման, որը ենթադրաբար ապացուցում է տվյալ մարդու ներկայացրած հակվածությունը՝ պնդումը):

Բ. Ակնհայտ հավատքի ուխտադրժություն՝
1. Հուդան, Հովհ.17:12
2. Սիմոն Մոգը, Գործք 8
3. Մարդիկ, որոնց մասին խոսվում է Մատթ.7:13-23-ում
4. Մարդիկ, որոնց մասին խոսվում է Մատթեոս 13, Մարկոս 4, Ղուկաս 8-ում
5. Հովհաննես 8:31-59-ի հրեաները
6. Աղեքսանդրոսն ու Հիմենոսը, 1 Տիմ.1:19-20
7. 1 Տիմ.6:21-ի մարդիկ
8. Հիմենոսն ու Փիղետոսը, 2 Տիմ.2:16-18
9. Դեմասը, 2 Տիմ.4:10
10. Կեղծ վարդապետները, 2 Պետրոս 2:19-22, Հուդա հհ. 12-19
11. հակաքրիստոսները, 1 Հովհ.2:18-19

Գ. Անպտուղ հավատք
1. 1 Կորնթացիների 3:10-15
2. 2 Պետրոս 1:8-11

Մենք հազվադեպ ենք մտածում այս տեքստերի շուրջ, քանի որ մեր սիստեմատիկ աստվածաբանությունը (Կալվինիզմը, Հայկականությունը, և այլն) տալիս է լիազորված պատասխան: Խնդրում եմ կանխավ մի դատեք ինձ այս թեման բարձրացնելու համար: Իմ նպատակն է ճշգրիտ՝ պատշաճ հերմենևտիկ ընթացակարգը: Մենք պետք է թույլ տանք, որ Աստվածաշունչը խոսի մեզ և չփորձենք ձուլել այն մեր ժամանակի աստվածաբանության հետ: Սա հաճախ ցավոտ և սթափեցնող է, քանի որ մեր աստվածաբանության մեծ մասը հարանվանական, մշակութային կամ փոխհարաբերությունների հետ է կապված (ծնող, ընկեր, հովիվ): Ոմանք, որ Աստծո Ժողովրդի մեջ էին, պարզվում է, որ նրանք Աստծո Ժողովրդից չէին (օրինակ՝ Հռոմ.9:6):

26:8 Այս տեսարանը վերաբերում է անապատի խորանին (տես՝ Ելից 25-31, 36-40), սակայն հետագայում սկսեց վերաբերել Մորիա լեռան վրա Երուսաղեմի տաճարին: Այնտեղ էր ՅԱՀՎԵՆ բնակվում մարդկանց մեջ (այսինքն՝ *Քրովբեների* միջև՝ ուխտի տապանակի վրա, որը գտնվում էր Սրբության Սրբոցում): Հավատարիմ հետևորդները փափագում էին լինել ՅԱՀՎԵԻ ներկայության մեջ (տես՝ Սաղմ.23:6, 27:4-5):

Սաղմոս 26:6 նաև վերաբերում է խորանին՝ տաճարին (տես՝ Սաղմ.24:3-4):

26:11 Չնայած որ սաղմոսերգուն հավատում է, որ ինքը անաղարտ է, նա գիտի, որ ՅԱՀՎԵՆ մաքուր և սուրբ է, իսկ բոլոր մարդիկ՝ ոչ (տես՝ Ես.53:6, Հռոմ.1:18-3:18): Որքան շատ է մարդը մոտենում ՅԱՀՎԵԻՆ Նրա հետ փոխհարաբերության մեջ, այնքան ավելի է իր անձնական մեղքի գիտակցումը (այսինքն՝ բացթողումները և առաջադրանքը) դառնում իրականություն: Սաղմոս 19:11-14 գեղեցիկ կերպով արտահայտում է այս ճշմարտությունը:

26:11բ Այս բաների պատճառով նա խնդրում է ՅԱՀՎԵԻՆ, որ՝
1. փրկի իրեն – BDB 804, KB 911, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿԱԳՆՈՒՄ, ՓՐԿԱԳՆԵԼ</u>
2. ողորմա՛ծ եղիր իմ նկատմամբ – BDB 335, KB 334, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ.25:16

Նա հավատում է ՅԱՀՎԵՆ վրեժխնդիր կլինի իր համար, և նա կօրհնի ՅԱՀՎԵԻՆ՝
1. երգերով, Սաղմ.26:7
2. վկայությամբ, Սաղմ.26:7
3. օրհնելով, 26:12 (BDB 138, KB 159, *Piel* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՕՐՀՆՎԱԾ (ՀԿ)</u>)

26:12 «հավաքներում» MT-ն ՀՈԳՆԱԿԻ է, սակայն այն կարող է լինել ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՀՈԳՆԱԿԻ օրինակ: NRSV, TEV, REB տարբերակները տալիս են ԵՋԱԿԻ: NET Աստվածաշունչը

ՀՈԳՆԱԿԻՆ ներակայացնում է որպես «երկրպագողներին» վերաբերող (տես՝ Knox Թարգմանությունը): ՀՈԳՆԱԿԻ ձևը հանդիպում է միայն այստեղ և Սաղմ. 68:26-ում:

❖ **«Ես ՏԻՐՈՋՆ եմ օրհնելու»** Սա վերաբերում է ՅԱՀՎԵԻ հանդեպ անձի կատարած հավատքի, վստահության, հույսի և հավատարմության հանրային դավանությանը (տես՝ Հռոմ. 10:9-13), հավանաբար պաշտամունքային միջավայրում:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչպե՞ս է ՅԱՀՎԵՆ քննում մարդկանց սիրտն ու միտքը:
2. Արդյո՞ք Սաղմ. 26:6-ը ակնարկում է, որ հեղինակը քահանա է:
3. Սահմանե՛ք «հրաշալի գործեր» խոսքը (Սաղմ. 26:7):
4. Բացատրե՛ք Սաղմ. 26:12ա ձեր իսկ բառերով: